

«*Գրանցված է*»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
29 մարտի 2006 թ.
Պետական գրանցման թիվ 10206087

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

27 մարտի 2006 թ.
ք. Երևան

թիվ 50-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Քրեակատարողական ծառայությունում ծառայության անցնելու համար
ուսումնական դասընթացում ներգրավելու և դասընթաց անցնելու կարգը» (հավելված N 1-ը
կցվում է):
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

Դ. Հարությունյան

Հավելված N 1

Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
2006 թվականի մարտի 27-ի
թիվ 50-Ն հրամանով

Կ Ա Ր Գ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մույն կարգով սահմանվում է քրեակատարողական ծառայությունում՝ որպես քրեակատարողական ծառայող, ծառայության անցնելու համար քաղաքացիների (այսուհետ՝ թեկնածու) պաշտոնի նշանակվելու համար մասնագիտական աշխատանքային փորձ չունենալու դեպքում մեկամսյա ուսումնական դասընթացում ներգրավելու և դասընթաց անցնելու կարգն ու պայմանները:

2. Ուսումնական դասընթացում ներգրավվելու և դասընթաց անցնելու հետ կապված թեկնածուի ընտրության և կազմակերպչական բնույթի այլ աշխատանքներն իրականացնում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կամ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կառավարման աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը (այսուհետ՝ ստորաբաժանում) կամ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կառավարման աշխատանքներ կատարող աշխատողը:

(2-րդ կետը փոփ. 09.11.10 N 183-Ն)

II. ԹԵԿՆԱԾՈՒԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

3. Ուսումնական դասընթացում կարող է ներգրավվել այն թեկնածուն, ով բավարարում է «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի պահանջները:

4. Քրեակատարողական ծառայությունում ծառայության անցնելու ցանկություն ունեցող զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության աշխատակիցները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության այն ծառայողները, որոնք բավարարում են «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի պահանջները, քրեակատարողական ծառայությունում պաշտոնի են նշանակվում առանց ուսումնական դասընթաց անցնելու:

5. Ստորաբաժանումը ուսումնական դասընթացից առաջ միջնորդություն է ներկայացնում «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված քրեակատարողական ծառայությունում համապատասխան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին (այսուհետ՝ ուղեգրող) թեկնածուին ուսումնական դասընթաց անցնելու համար ուղեգրելու վերաբերյալ:

(5-րդ կետը փոփ. 09.11.10 N 183-Ն)

6. Ստորաբաժանումը ուսումնական դասընթացից առնվազն մեկ շաբաթ առաջ դասընթացը սկսվելու մասին տեղեկացնում է թեկնածուին՝ տրամադրելով ուղեգիր (Ձև N 1)՝ կցվում է:

(6-րդ կետը փոփ. 09.11.10 N 183-Ն)

7. Թեկնածուի ուսուցումն իրականացվում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված ուսումնական դասընթացի վերաբերյալ ծրագրի համաձայն՝ տեսագործական պարապմունքների միջոցով:

(7-րդ կետը լրաց. 09.11.10 N 183-Ն)

8. Քրեակատարողական ծառայությունում թեկնածուի ուսումնական դասընթացը ղեկավարում է ուղեգրում նշված և ուղեգրողի կողմից նշանակված քրեակատարողական վարչության կամ հիմնարկի համապատասխան ծառայողը (այսուհետ՝ տեսագործական պարապմունքների ղեկավար):

Թեկնածուի դիմումի համաձայն ուղեգրողը կարող է փոխել թեկնածուի ղեկավարին:

9. Ուսումնական դասընթաց անցնող թեկնածուն ղեկավարի հանձնարարությամբ ուսումնասիրում է ուսումնական դասընթացի վերաբերյալ ծրագրով նախատեսված քրեակատարողական ծառայության ոլորտին առնչվող իրավական ակտերը, մասնակցում է ղեկավարի կամ վերջինիս հանձնարարությամբ՝ քրեակատարողական վարչության կամ հիմնարկի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ծառայողի աշխատանքային պարտականություններից բխող գործառնությունների իրականացմանը:

Թեկնածուն կարող է ներգրավվել առանձին տեսական պարապմունքների:

(9-րդ կետը լրաց 09.11.10 N 183-Ն)

10. Ուսումնական դասընթացն ավարտվում է ղեկավարի կողմից ուսումնական դասընթաց անցած թեկնածուի ընդհանուր պատրաստվածության մակարդակի, տեսական և գործնական պարապմունքների ընթացքում նրա կողմից ստացված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատմամբ: Այդ մասին նշվում է համապատասխան եզրակացությունում (Ձև N 2)՝ կցվում է:

11. Ուսումնական դասընթացը ավարտվելուց հետո ստորաբաժանման ղեկավարը կազմում և քրեակատարողական վարչության պետի կամ քրեակատարողական հիմնարկի պետի հաստատմանն է ներկայացնում եզրակացություն՝ ուսումնական դասընթացի արդյունքների մասին (Ձև N 2)՝ կցվում է:

Եզրակացության մեկ օրինակը պահվում է ստորաբաժանումում՝ քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնելու նպատակով, իսկ երկրորդ օրինակը տրամադրվում է ուսումնական դասընթաց անցած թեկնածուին:

(11-րդ կետը փոփ., լրաց 09.11.10 N 183-Ն)

12. Թեկնածուի ուսումնական դասընթացը կարող է վաղաժամկետ դադարեցվել ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ՝ թեկնածուի դիմումի համաձայն:

Թեկնածուի կողմից անհարգելի պատճառով տասն օր անընդմեջ դասընթացներին չհաճախելու, կամ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերում ստորաբաժանման ղեկավարը միջնորդություն է ներկայացնում ուղեգրողին՝ թեկնածուի ուսումնական դասընթացը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

(12-րդ կետը փոփ. 09.11.10 N 183-Ն)

Ձև N 1

ՈՒ Ղ Ե Գ Ի Ր

ԹԵԿՆԱԾՈՒԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ

Տրվում է _____-ին,

(անուն, ազգանուն, հայրանուն)

թեկնածուի _____

(ուսումնական դասընթաց անցնելու)

_____տեսագործնական պարապմունքներին

(պարապմունքների բովանդակությունը)

և _____-ում

(քրեակատարողական վարչության կամ հիմնարկի համապատասխան ստորաբաժանման անվանումը)

մասնակցելու համար:

(տեսագործական պարապմունքների ժամկետի սկիզբը և ավարտը)

(պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ձև N 2

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ քաղաքացի _____

(անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը և վայրը)

_____ (կրթությունը)

Ղեկավարի կարծիքը (նշվում է ուսումնական դասընթաց անցած թեկնածուի ընդհանուր պատրաստվածության մակարդակը, տեսական և գործնական պարապմունքների ընթացքում նրա կողմից ստացված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները).

_____ (ղեկավարի պաշտոնը)

_____ (ստորագրությունը, անունը, ազգանունը)

« ____ » _____ 20 թ.

Ստորաբաժանման ղեկավարի եզրակացությունը (նշվում է ինքնուրույն աշխատանքի համար ուսումնական դասընթաց անցած թեկնածուի պատրաստվածության աստիճանը)

_____ (Ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը)

_____ (Ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը)

«_____» _____ 20 թ.

«Հաստատում եմ»

(Քրեակատարողական վարչության
պետի կամ քրեակատարողական հիմնարկի պետի ստորագրությունը)

(Քրեակատարողական վարչության
պետի կամ քրեակատարողական հիմնարկի պետի անունը, ազգանունը)

«_____» _____ 20 թ.

(Ձևը փոփ., լրաց 09.11.10 N 183-Ն)